են ներհակք եւ ոնհաշտ թշնամիք. նմին իրի պարտ է զգոյշ և պատրաստ լինել 'ի նոցանէ, զի ես փորձիւ իմացայ և ձեզ գրեցի, զի ծանիջիք, յորոց չարեաց փրկեսցէ Տէր Աստուած զՍ. Աթոռս և զազգն մեր. ամէն։

Այսպէս կնքէ զայս ուղեւորութիւն իւր երանելի Հայրապետն, որ ինքն գրեալ է ամենայն հանգամանօք, որպէս է տեսանել 'ի յիշատակարանս ձեռագիր Աւետարանի, որ և հրատարակեցաւ 'ի Սիոն ամսաթերթի. (1866. Նէ՝ 122. 141. 184)։

Զպատմութիւն հակառակութեանցն Յունաց յաղագս վանաց Ս. Յակոբայ, և այլոց իրաց՝ քաղեալ եդաք 'ի կարգի պատմութեանս հաւատարիմ յաղբերաց։ Սակայն զայս պատմութիւն այլով իմն եղանակաւ ասանդէ Տէր Մելքոն քահանայ եկեղեցւոյն Պալատու 'ի Կոստանդինուպոլիս, առեալ յաւանդութենէ ծերոց ժամանակիս, որպէս գըրեալ տեսանի 'ի ձեռագիրս ինչ, և յածի 'ի լեզուս ռամկաց, զորմէ զանց արարաք դնել 'ի կարգի Պատմութեանս։

ԳԼՈՒԽ Է.

Զարութիւն Յունաց։ Ֆելլահք Պէյթ Ճալա գիւղ։ Այլազգի դռնապանք։ Սեղան Հայոց 'ի Ս. Աստուածածին։ Մահ Յովհաննու Պատրիարքի, զգեստ Նորին։ Վանք Ս. Փրկչի։ Կռիւ Լատինաց 'ի Ս. Յարութիւն։ Նամակ Գրիգորի Պատրիարքի առ դեսպանն Գաղղիոյ 'ի Կոստանդինուպոլիս։ Խնդիր Լատինաց վասն գմբեթի Գերեզմանին։

ԱՍԱՑՈՒՐ սակաւուք զոր ինչ միանգամ պատահեցաւ յերուսաղէմ զկնի մեկնելոյ Գրիգորի Պատրիարքի 'ի Կոստանդինուպոլիս։ Քանզի 'ի նմին ժամանակի 'ի սաստկանալ հակառակութեան Յունաց 'ի Կայսերանիստ քաղաքի անդ, գրգռեցան և վանականք նոցին ատելութեամբ յերուսաղէմ ընդդէմ Հայոց. այլ ջանիւք Աթոռակալ Գաբրիէլ վարդապետի վերստին յանձնեցան վանօրայք 'ի ձեռս Հայոց օրինօք դատարանի։